ՀՀ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի ուղերձը Հայոց ցեղասպանության 100 ամյակի կապակցությամբ

Սիրելի հայրենակիցներ,

Լրացավ մարդկության դեմ ուղղված մեծագույն ոճիրներից մեկի՝ Հայոց ցեղասպանության 100 ամյակը: 1915 թվականին Օսմանյան Թուրքիայի կողմից հայ ժողովրդի հանդեպ պետականորեն իրագործվեց ցեղասպանություն: Ոճիր, որը քաղաքակիրթ աշխարհի կողմից ոչ միայն ժամանակին չկանխվեց, այլեւ չճանաչվեց ու չդատապարտվեց՝ այդպիսով նորագույն պատմության մեջ հիմք դառնալով նորանոր ցեղասպանությունների:

Մեկ դար շարունակ հայ ժողովուրդը պայքարում է իր պատմության եղերական ժամանակաշրջանի վերաբերյալ ճշմարտացի գնահատական ստանալու, արդարացիության վերականգնման համար, սրբորեն պահպանում իրենց արյամբ ու հիշատակներով սերունդներից վրեժ պահանջող մեր նահատակ հայրերի ու պապերի հիշատակը:

Այսօր առավել, քան երբեւէ, կարեւորվում է 20-րդ դարի առաջին ցեղասպանության՝ հայերի դեմ իրականացված եղեռնագործության ճանաչման ու դատապարտման պահանջը: Հարց, որը Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանն ու ղեկավարությունը շարունակում են պահել մեր երկրի արտաքին քաղաքականության առաջնակարգ խնդիրներից մեկը՝ միաժամանակ պահպանելով պետությունների հետ բնականոն հարաբերություններ ունենալու, համագործակցելու միտումը:

Վերջին տարիներին եւ հատկապես այսօր՝ ցեղասպանության 100-ամյա տարելիցի կապակցությամբ ընդարձակվում է Հայոց ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող երկրների ցանկը, ինչն անչափ կարեւոր է ժամանակակից աշխարհում ցեղասպանության հանցագործության կանխարգելման, միջազգային անվտանգության համակարգի ամրապնդման ու քաղաքակրթությունների երկխոսության խթանման առումով:

Առաջադեմ երկրներում դատապարտման, հիշատակի եւ խոնարհման միջոցառումներ են իրականացվում, ցեղասպանության զոհերի ոգեկոչման եւ զորակցման

խոսքեր հնչում: Այդ ամենը որքան էլ կիսում է կորստի ցավը, սակայն, ամենեւին էլ չի մեղմում անարդարության հանդեպ զայրույթն ու պոռթկումը: Այն առավել վճռականություն ու հաստատակամություն է ներշնչում՝ ազգովի տեր կանգնելու մեր պատմության ամենաարյունալի եւ կնճռոտ էջերին, եւ մեր պահանջատիրական ձայնը հետեւողական ու լսելի դարձնելու:

Ահա այսպիսի դրսեւորումներով ենք մենք մուտք գործում դեպի Հայոց ցեղասպանության երկրորդ հարյուրամյակ, դարաշրջան, որը նոր լույս եւ հեռանկար է սփռելու պատմական արդարացիության վերականգնման սրբազան գործի վրա: